

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԲԵՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/27 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Կոստյումի կտորի բաղադրությունը՝ 35% բամբակ և 65% պոլիեստեր, մակերեսային խտությունը՝ 250գր/մ2: Կտորը պետք է լինի ջրադիմացկուն: Աստառը լինի 100% պոլիեսթեր, Կոստյումի մեջ պետք է լինի երկտակ ջերմամեկուսիչ նյութ, որից բաճկոնի ընդհանուր խտությունը լինի մինիմում 450գր/մ2, իսկ տաբատի ընդհանուր խտությունը լինի մինիմում 300գր/մ2: Կտորի գույնը և երանգները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Գծային չափսերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չպետք է գերազանցի 2-3%: Բաճկոնը պետք է ունենա 7 վրադիր ծավալային գրպան, որոնց դիրքերը և ձևերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Բաճկոնի մեջքը և առաջնամասը ունենա տաքացվող ներդիր, որը մշակված է 350 գ/մ2 խտությամբ սինթետիկ նյութով, բաճկոնի թևերը ունենան տաքացվող ներդիր, որը մշակված է 200 գ/մ2 խտությամբ սինթետիկ նյութով: Բաճկոնի երկարությունը գոտկատեղից ներքև, լինի ուղիղ կենտրոնական մետաղական կայծակ-շղթայով՝ վերևից և ներքևից բացվելու հնարավորությամբ, պաշտպանված կպչուն ժապավենով կամ կոճակ-կնոպկայով ամրացող վրադիր դետալով: Բաճկոնի մեջքի կենտրոնական մասում կարել 5 սմ լայնությամբ 28 սմ երկարությամբ գործվածքով «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» բառը, իսկ կրծքավանդակի ձախ մասում՝ 1 վրադիր գրպան կափույրով, որի վրա պետք է դաշվի «ԲԵՑ ՓԲԸ» բառերը: Գործվածքը լինի սև գույն դեղին եզրերով, տառերը լինեն դեղին գույն, բարձրությունը լինի 3 սմ: Բաճկոնի օձիքը պետք է նախատեսված լինի կրման երկու տարբերակով՝ ուղղահայաց և ծավիղ, որի վրա պետք է մետաղական շղթայով ամրացված լինի գլխարկ (капюшон), որը ունենա ձեռքով կարգավորվող քուղ ֆիքսատորներով: Օձիքի, ինչպես նաև գլխարկի ներսի մասը պետք է կարված լինի տաք, փափուկ ֆլիսից:

Տաբատը լինի ուղիղ ուրվագծով, առաջամասի մուտքի բացվածքը կայծակ-շղթայով և կոճակով: Մեջքի հատվածում գոտու կարգավորիչ ռետինե ժապավենով, 2 կողքային գրպան թեքված մուտքով, իսկ հետևի 1 վրադիր գրպանը բաց ուղիղ մուտքով: Տաբատը ունենա տաքացվող ներդիր, որը մշակված է 200 գ/մ² խտությամբ սինթետիկով:

Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է Վաճառողը: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Մասնակիցը պետք է ներկայացնի արտահագուստի նմուշի մեկական օրինակ և նմուշը պետք է պարտադիր համաձայնեցվի Պատվիրատուի հետ: Կտորը, որից կարվելու է արտահագուստը պետք է ունենա որակի համապատասխանության սերտիֆիկատ, լաբորատոր փորձարկումների արձանագրություն և համապատասխանի CTO 71327041-004-2008, EN ISO 14116, ГОСТ Р 12.4.236-2007 ստանդարտներին: Արտահագուստի քանակները և չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Արտահագուստների գույնի երանգը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом РЕС-ЕЦДЦПДР-25/27
ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	